

**Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ
Վարկային Կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերություն**

31 դեկտեմբերի 2019թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	8
Ծանոթագրություն 1	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք.Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը.

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2019թ. հոկտեմբերի 11-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2020թ. հունիսի 10-ի մեր եզրակացությունում:

*Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության
պատասխանատվությունը*

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտ անցած ամփոփ ֆինանսական
հաշվետվությունների՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքների համաձայն
պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով 810 “Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների
վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ”
ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա՝
արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները
բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն
Առաջադրանքի պատասխանատու



10 հունիսի, 2020թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

2019թ. հոկտեմբերի 11-ից մինչև
2019թ. դեկտեմբերի
31-ին ավարտված
ժամանակաշրջան

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	1,643
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(543)
Զուտ տոկոսային եկամուտներ	1,100
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	2,970
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(561)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	2,409
Արտարժույթային գործառնություններից զուտ վնաս	(34)
Արժեզրկման ծախս	(2,776)
Անձնակազմի գծով ծախսեր	(9,397)
Այլ ծախսեր	(7,613)
Վնաս մինչև հարկումը	(16,311)
Շահութահարկի գծով փոխհատուցում	2,589
Ժամանակաշրջանի վնաս	(13,722)
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	(13,722)

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2019թ.

Ակտիվներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	143,216
Հաճախորդներին տրված վարկեր	7,079
Ֆինանսական վաճառքի գծով դեբիտորական պարտքեր	94,152
Հիմնական միջոցներ	14,851
Հետաձգված հարկային ակտիվ	2,589
Այլ ակտիվներ	83,143

Ընդամենը՝ ակտիվներ

345,030

Պարտավորություններ և սեփական կապիտալ

Պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ	97,546
Այլ պարտավորություններ	11,206

Ընդամենը՝ պարտավորություններ

108,752

Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ	250,000
Կուտակված վնաս	(13,722)
Ընդամենը՝ սեփական կապիտալ	236,278

Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ

345,030

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2020թ. հունիսի 10-ին՝

Արսեն Բազիկյան

Գլխավոր գործադիր տնօրեն

Լևոն Արզումանյան

Գլխավոր հաշվապահ



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Հաշվեկշիռը 2019թ. հոկտեմբերի 11-ի դրությամբ	-	-	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	250,000	-	250,000
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	250,000	-	250,000
Ժամանակաշրջանի վնաս	-	(13,722)	(13,722)
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	(13,722)	(13,722)
Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	250,000	(13,722)	236,278

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

2019թ. հոկտեմբերի 11-ից
մինչև 2019թ. դեկտեմբերի
31-ին ավարտված
ժամանակաշրջան

<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>	
Վնաս մինչև հարկումը	(16,311)
<i>Ճշգրտումներ</i>	
Մաշվածության մասհանումներ	441
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս	2,776
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	(99)
Ստացվելիք տոկոսներ	(242)
Վճարվելիք տոկոսներ	282
Այլ կուտակված ծախսեր	737
<i>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</i>	<u>(12,416)</u>
<i>Նվազում գործառնական ակտիվներում</i>	
Հաճախորդներին տրված վարկեր	(7,098)
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	(95,103)
Այլ ակտիվներ	(83,185)
<i>Ավելացում գործառնական պարտավորություններում</i>	2,906
Այլ պարտավորություններ	
<i>Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը</i>	<u>(194,896)</u>
Վճարված շահութահարկ	-
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(194,896)</u>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>	
Հիմնական միջոցների առք	(7,760)
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(7,760)</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

2019թ. հոկտեմբերի 11-ից
մինչև 2019թ. դեկտեմբերի
31-ին ավարտված
ժամանակաշրջան

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

Բաժնետիրական կապիտալի թողարկում	250,000
Ստացված վարկեր և փոխառություններ	102,186
Վարկերի և փոխառությունների մարում	(6,255)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(100)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	345,831
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	143,175
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	-
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	41
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	143,216

Լրացուցիչ տեղեկատվություն՝

Ստացված տոկոսներ	1,401
Վճարված տոկոսներ	(261)

Ծանոթագրություն 1

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, 2019թ. հոկտեմբերի 11-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը՝ քաղված «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը՝ կից ծանոթագրություններով, հասանելի է «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության գրասենյակում՝ Հայաստան, Երևան, Վաղարշ Վաղարշյան փող., 12 շենք, տարածք 11 հասցեով: